




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Առևտրագիտական
և Մանկավարժական



1902 ՄԱՐՏ 1 — ԹԻԻ 14

ՏՊԱԴՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ



ALBANY

STREET

WILLIAMSON & CO. BOOKSELLERS



1852





ՀԱՆԳԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هنا را كيداق
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 14

I ՄՐԱՏ 1902

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՒՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ս. Ն. Ե. Ս. Ս.

Որ ոչնչէն զսիեզերն ստեղծեց, նա՛ ինքն է Աստուած,
Որ ծառայեց երկրի վրայ ծովն անհուն՝ համասարած,
Որ օդաչու ամպոց մէջէն, հանեց հողմունս անձրեւաբեր՝
Որ կապուսակ ի կամարին, սփռեց փալփիւն յուսաւորներ,
Որ եւ յառոյց կազ եւ կոխ ի մէջ սարեց բնութեան էից,
Դրաւ սահման եւ ուղղութիւն բազմանոյլ յընթացս երկնից,
Երկիրն յոյն, յամենայնի՝ այլ մեծարանս նմա շնորհաց,
Արարածներն են հպասակ, եւ աշխարհն է իւր գործ ձեռաց,
Թէ խռովին ալեաց կոհակի, ինքն է կարող ցածուցանել,
Մոռիկներն էին սասիկ, ոչ եւս իշխեն գոռալ, մոռնել,
Արեգն զկայ առնու յընթացս. թէ արձակէ անդրէն հրաման,
Տէր է հանուրց, որպէս սկիզբն յաւիտենից եւ անսահման,
Համայնք Անով կան ու մնան, առանց Նորա բնաւ ինչ չիք.
Մահկանացուաց մէջ ինքն միայն է միշտ անմահ ու երջանիկ.

Թրգւ. Յ. Ս. Դ.

ՌՕԹՌՈՒ

1902 փետրւար 20, Գասք - Գէոյ

Գ Խ Յ Ե Ր Ը

ԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՒԱԳԻՒ ՄԻ ՔԱՂՈՒԱԾ

Ա.

Այլ գիշեր. ո՛ր զգայուն սիրտ հրճուանքով հրաքանդներ քու վերահաս ժամանումը տեսնելով եւ արեւին լուսափայլ շաղերէն գերազանց համարիր քու անպաճոյճ մթութիւնը, որ մխիթարիչ քողով մը կը փութայ պահպանող հովանի մը տարածելու ամէն յուսարեկ եւ վշտահար ընտանիքի, որոնց արցունքով ողողուած արտեւանունքները կը ցամքին միշտ մխիթարիչ եւ զովաբեր հողմերուդ առջեւ:

Բ.

Ո՛վ գիշեր, դու հաւասար սիրով եւ գրգռուանքով կը շոյես թէ պարտէզներու քրնքոյչ հոտաւէտ վարդերը եւ թէ անտառաց փշապատ թուփերը. մեծ է կարողութիւնդ, ինչպէս Արարչիդ, որու խորհրդաւոր հանդիստն եւ սրտակիցն եղած ես միշտ. խաւարդ անխորարար կը պատէ կարողն եւ անկարողը, խեղճ խղիկը եւ հարուստ ապարանները, մեծատան լուսաղող բնակաւանը եւ վշտաշարժար աղքատին խցիկը:

Գ.

Ո՛վ գիշեր, թէ որ դու չըլլայիր. ո՛վ պիտի սփոփէր իր միածին զաւակը կորսնցընող մայրը. գթութեամբ լի է այն քունը որով կը ծանրացնես վշտացեալի մը արտեւանունքը, որ այս առժամանակեայ մահահանգոյն նիրհման մէջ՝ կը կտրէ պահ մը կենաց անձկութեան թելը, եւ կը միանայ իր սիրելիներուն զորս կորուսած էր անդէն եւ որոնք միայնակ ու տառապեալ թողուցած էին զինքը այս արտառոց հովտին մէջ:

Դ.

Ո՛վ գիշեր, երբ բանտարկեալը զինքը կապող ու կաշկանդող շղթաները տեսնելով՝ յուսաթափ եւ լքեալ գետին կը տապալի, կը հասնի մէկէն քու զօրաւոր իշխանութիւնդ եւ քով մը իջեցնելով՝ կը ծածկէ անոր բռնաժանի երկաթները եւ սաստիկահար հարուածներու կապուտակ գծերը. եւ

այդ միջոցին նորանոր յոյսեր եւ ծաղկաբոյր ակնկալութիւններ քու ստուերիդ տակ կը թեւապարեն բանտարկեալին շուրջը եւ հեշտօրօր երազներ կը հասնին մեղմացնել անոր վիճակին դառնութիւնները:

Ե.

Ո՛վ գիշեր, յաղթեցիր վերջապէս երկրիս, երբ մարդկութիւնն շնորհապարտ բարձրացուց առ Աստուած իր առաջին աղօթից մտարոյր խռնկերը. ոչ մէկ ամպ այդ միջոցին համարձակեցաւ մթապնել այն հազարաւոր եւ բիւրաւոր լուսաւորները, որք ականակուռ կը զարդարէին ծոցդ, եւ խորին լուսթիւնդ կը վերածնէիր մարդերու սիրտը դէպ ի ծածկագիտին Աստուծոյ. ծաղիկներու վրայ սփռուած ցօղին պէս յոյս եւ սէր կ'անձրեւէր ամէնուրեք եւ անմեղունակ աչքեր դէպի երկիր կը խոնարհէին զարմացումով, եւ միտքը կը սորվեցնէր շրթներուն երախտագլտութեան երգը:

Զ.

Ո՛վ գիշեր, անդուժ է ցերեկը թշուառներուն. կը նշանակէ անխղճաբար անոնց ոտից հետքերը եւ կ'ուղղէ զանոնք վիրաւորելու համար արձակուած թունալի նետերը. կը ծածկուիս դու վախկոտ ճագարի մը պէս, եւ անոնք արտասուալի կը փնտրեն քեզի եւ քիսկան անձկութեամբ, եւ երբ հասնի քու ժամի, կը դադրին ամէն երկիւղ եւ քեզով անոնց թշնամութեան զէնքերը կը ժանգոտին իսպառ:

Է.

Ո՛վ գիշեր, քու պարզեւդ է այն անդորրութիւնը որ կը տիրէ երբ կը խոնարհի նախանձընդդէմ արեւը, եւ երբ հարիւրաւոր ձայներ ի վեր կը բարձրանան ընդարձակ ովկիսաներէ օրհնելու համար զքեզ, այն ստեն կը զրկէ քու թշնամիդ արենազոյն չաղով իր յետին սպառնալիքը. յետին թափ իր անկարող բարկութեանը, « Հանգչեցէք, ո՛վ նաւապետք, գիշերն առած է իր ձեռքը բնութեան դրօշը, թողուցէ՛ք պարան եւ թիակներ », այնպէս որ այդ միջոցին ալիքներն իսկ կ'զգան քու ստուերներուդ խաղաղաբեր աղղեցութիւնը:

Ը.

Ո՛վ գիշեր, անհուն եւ անսահման ես

դու ծովին պէս, ինչպէս նաև վտանգաւոր
եւ ահարկու նման անապատաց մերկութեան:
Զկայ հիւրընկալ արմաւենի մը որ իւր ըստ-
ուերովն հովանի ընծայէ արեւակեղ ուղե-
ւորին, չկայ աղբերակ մը որ զովացնէ ա-
նոր ծարաւաբեկ չլթները, չկայ ապահով
ժայռ մը որ վաճան ըլլայ վաստակաբեկ
պանդխտին երբ բարձրանայ աւազալից ամ-
պը ծածկելու զանի, եւ ահա կ'երեւիս դուն
եւ քու հովանիդ կը մեղմացնէ երկնից հը-
րակէզ տաքը, անձրեւը կը յագեցնէ պա-
պակած կոկորդները եւ թեւաւորեալ աւա-
զը կը կասի թռչելէ, եւ ասոր համար էր
որ մեր նախահարք սննապատի մայր անուա-
ղեցին զքեզ, որոց աչքերը անհուն ուրա-
խութեամբ կը փայլէին ամեն անգամ որ
դուն կը յաղթէիր արեգակին:


Թ.

Ո՛վ գիւեք, պերճախօս է միշտ անպա-
ճոյճ լոյսդ որ կը սփռես մեր շուրջը եւ
կ'աւետէ մեր հոգւոյն սէր եւ խաղաղու-
թիւն. իսկոյն հաւատքը կը կենդանանայ,
եւ մարդկութիւնը կը յափշտակուի հրացու-
մով, երբ գեղեցիկ լոյս մը կ'արծաթագունէ
ճակրնատներու գագաթը:

Ժ.

Ո՛վ գիւեք, երբ իմ աւերուած ու լքեալ
գերեզմանն ի դուր արտասուաց պաշտօն մը
խնդրէ մարդերու սուտապատիր բարեկա-
մութենէն, այցելու եղիր իրեն գթութեամբդ
եւ իմ աճիւններուս պահապան հողակոյտն
հագուեցուր թարմ խոտով եւ նւր ծաղիկ-
ներով:


Յ. Ս. ԱՐԻԿԵԱՆ



Եթէ կ'ուզես առողջ ապրիլ, կեր՛ երբ
բնութիւնը պահանջէ և ինչ որ ախորժելի
կուգայ քեզի. կեր՛ ապրելու համար. քան
թէ ուտելու համար:

* *

Քնացիր, որքան որ պէտք է մարմինդ
հանգստացնելու եւ կազդուրելու համար.



ՆՈՒԷՐ

ՊԶՏԻՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ

Պզտիկ սրղափ, կը նախանձիմ ձեզ յաւեհ,
Զեր հոգին միշտ կոյս է, դալար ծաղկաւեհ.
Ու ձեր կեանքն է ծաղկի մը պէս խառնուիկ,
Կաղանդ ըլլայ քե Զաշիկ:

Դուք դեռ անմեղ, անբիծ, որպէս փերքէ,
Սուրբ խայտանքով ձեր կուրծքը յար կը սրոփէ.
Զեն վրդովեր ձեր միտքն ալ չֆնաղ, անապակ՝

Հաշիւներ խուլ ու քափակ:

Տասրակներու հանգունակ հեզ, բոց ու ժիր,
Կեղծիքներէ դուք չեք բընաւ ախորժիր,
Կ'արհամարհեք, ամենագորն իսկ մեծալ,
Դուք միշտ անմեղ ու մասաղ:

Ու չի բոռմիր ձանձուքեան մեջ ձեր հոգին,
Զեր դասերուն դուք կը փարիք կարգին,
Ու չամպոսիր ձեր կեանքն անուշ ու գորով

Մառախլապատ բաղձերով:

Զըւարթութիւն՝ ճանաչներով քաթաղուն՝
Շուքն է կազմեր խառնաւազեղ ձեր գլխուն.
Ու խենթ հրեի խանդաղակաթ ու բարի.

Զեր հակսին վրայ կը քառի:

Խրնդամոլիկ երբ կը խաղափ քեռ քելի.
Զենե ամեն մեկը բոց մ'է կը բըլի,
Անմեղութիւնն՝ աստուածավառ շափիղայ,

Աչքերնուդ մեջ կը շողայ:

Յուշիկ յուշիկ վայելեցեք սուտ կեանքին
Երանագեղ ծորանքն համեղ ու անգին,
Շուշանի պէս ձեր դիմքն է քարմ ու առոյգ.

Ու ձեր սիրտն է վառ խառոյկ:

Խաղցե՛ք, կեանքի խուլ ցաւերուն անգիտակ,
Խաղցե՛ք, սրղափ, սառերու վրայ սպիտակ,
Խաղցե՛ք, ի՞նչ հոգ, կը վառի՞նք քե կը մարին,

Ճրագները երկրնին:

Խաղցեք խել խօլ ու երգեցեք խել խնդում,
Զեր երգն ունի խաղեր մ'առոյգ, անհրճում,
Ու խանդավառ, օ՛ն, երգեցեք մեծ բարին,

Անով մարդիկ լոկ կ'ապրին:

Ա՛ն, երանի, բիւր երանի ձեզ յաւեհ,
Զեր սիրտն է կոյս, ամբիծ, դալար, ծաղկաւեհ
Ու ձեր կեանքն է ծաղկի նրման խառնուիկ,

Կաղանդ ըլլայ քե Զաշիկ:

Տարէնտէ

ՄԿՐՏԻԶ Ս. ՅՈՒՐԵԱՆ





ՊԱՐՈՆ ԳԷՈՐԳԻ ԱՅԾՈՒԿԸ

Կ Ա Մ

ԱՆՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱԺԸ

Պր. Գեորգ բնաւ բաղդ ու երջանկութիւն չէր ունեցած իր այծերուն հետ, ամէն ալ միեւնոյն կերպով կորսնցնելուն համար: Անոնք՝ իրենց նեղ կեանքէն զգուած՝ առտու մը չուանին կը կտրէին, կծիկը կը դնէին և լեռ կ'երթային: Ո՛չ իրենց տէրոջը դժուանքներն, ո՛չ գայլին երկիւղը, և ո՛չ բան մը մտքերնուն դրածէն ետ կը կեցընէին. ու կ'ուզէին, հոն, լեռան վրայ արծաի համարձակ պտտիլ:

Պր. Գեորգ, որ բնաւ իր անասուններուն սովորութենէն չէր հասկնար, վհատած էր: Կըսէր օր մը. «Ա՛լ բաւական է. այծերը քովս կը ձանձրանան, ա՛լ ևս և ո՛չ մէկ հատ պիտի պահեմ»:

Եւ տակաւն չի վհատեցաւ, ու նոյն կերպով վեց հատ կորսնցնելէն յետոյ՝ եօթներորդ մըն ալ դնեց. մի միայն այս անգամ հոգ տարաւ որ, իր քով վարժեցնելու համար քիչ մը պզտիկ առնէ:

Ա՛հ, որքան սիրուն էր Պր. Գեորգի

փոքրիկ այծը, որքան սիրուն էր իր անուշ աչքերովն, իր պտըլիկ մօրուսակովն, իր սև ու փայլուն կնդակներովն, իր մթաշերտ եղջիւրներովն և իր ճերմակ երկայն ստեններով՝ որոնք իր վրայ գրադ մը կը ձևացընէին: Գրեթէ՝ էղմէրալտայի ուլիկին չափ սիրուն էր, և յետոյ հլու, գգուսաէր, առանց շարժելու թող կուտար կիթել, ու բընաւ ոտքը սկահակին մէջ չէր դնէր. փոքրիկ այծի սէ՛ր մը:

Պր. Գեորգ իր տանը ետեւը սրափուշերով շրջապատուած արօտավայր մը ունէր. հոն դրաւ իր նոր բանսիօնէրը ու զանի Սիրունիկ կոչեց: Մարգագետնին ամէնալաւ տեղը ցիցի մը կապեց զայն, հոգ տանելով որ չուանը երկար թողուի, մերթ Եւ մերթ կուգար տեսնել թէ աղէ՞կ է: Այծը՝ շատ երջանիկ էր և այնքան սիրով կը ճարակէր խոտը որ, Պր. Գեորգի զարմանք կ'առնէր: «Վերջապէս, կը մտածէր խեղճ ազան, ահաւասիկ այծ մը՝ որ չպիտի ձանձրանայ,

և միշտ պիտի մնայ» :

Պր. Գէորգը կը խաբուէր. այծուկը ճանձ-
րացաւ :

Օր մը ըսաւ ինքնիրեն լեռը դիտելով .

« Ո՛րչափ աղէկ ըլլալու է վերը : Ի՞նչ
հաճոյք է ուստոստել ցախին մէջ, առանց
այս անիծեալ չուանին. էշի կամ եզի համար
այս արօտավայրը շատ լաւ է : Այծերուն
ընդարձակ տեղ պէտք է : »

Այս վայրկեանէն սկսեալ, արօտավայ-
րին խոտը անհամ թուեցաւ. ճանձրոյթը
վրայ հասաւ, նիհարեցաւ. հիւժեց ու կաթը
կը քիչնար :

Պր. Գէորգը լաւ գիտէր թէ իր այծը
բան մը ունէր, բայց չէր գիտեր թէ ի՞նչ էր :
Առտու մը դայն կ'իթելէ յետոյ, այծը պա-
րոնին դարձաւ ու կոշտ լեղուով մը ըսաւ .

— Մտիկ ըրէք, Պր. Գէորգ, ես ձեր
քովը կը հիւծիմ, թողէք որ լեռ երթամ :

— Ա՛խ, Աստուած իմ, ասիկայ ալ կ'եր-
թայ կոր, գոչեց Պր. Գէորգը ապշած, և
ձեռքի սկահակը վար նետեց, յետոյ այծին
քով խոտին վրայ նստաւ :

— Ի՞նչպէս, Սիրունիկ, ըսաւ, կ'ուզես
զիս թողու՞լ :

— Այո՛, Պր. Գէորգ, պատասխանեց
Սիրունիկ :

— Միթէ հոս խո՞տ կը պակսի :

— Ո՛հ, ո՛չ, Պր. Գէորգ :

— Թերեւս չուանդ կարճ կապուած է,
կ'ուզես որ երկնցնեմ :

— Չարթեր, Պր. Գէորգ :

— Ուրեմն ի՞նչ պէտք է քեզ, ի՞նչ
կ'ուզես որ ընեմ :

— Լեռ երթալ կ'ուզեմ :

— Բայց թշուառակա՛ն, չե՞ս գիտեր որ
լեռը գայլ կայ. ի՞նչ պիտի ընես եթէ վը-
րադ գայ :

— Եղջիւրի հարուածներ պիտի տամ :

— Դայլը կը ծաղրէ քեզի, ապուշ ա-
րարած : Անիկա ժամանակով քենէ աւելի
հաստատուն եղջիւրներ ունեցող այծերս կե-
րաւ, Դուն ալ գիտես խեղճ ձերուկ Սե-
ւուկը, որ նոխազի մը պէս զօրաւոր էր :
Ամբողջ գիշերը կուռեցաւ, բայց առտուն
գայլը դայն լափեց :

— Խեղճ Սեւուկ, բայց թողէք զիս լեռ
երթամ :

— Բարեբա՛ր Աստուած, ըսաւ Պր. Գէ-
որգ, բայց ի՞նչ եղաւ այժմերուս. ահա հատ
մըն ալ՝ որ գայլին կեր պիտի ըլլայ. բայց
ո՛չ, ո՛չ, հակառակ քու կամքիդ՝ քեզի պի-
տի ազատեմ, անդգամ, ու վախճալով որ
օր մը չուանդ կը կտրես, քեզի ախոռի մը
մէջ պիտի պահեմ, որպէս զի հոն աւելի ա-
պահով ըլլաս :

Ասոր վրայ, Պր. Գէորգը ախոռ մը տա-
րաւ այծը ու կրկնակի դուռը դոցելով կը դ-
պեց : Դժբաղդարար, պատուհանը բաց մու-
ցած էր, և հազիւ թէ հեռացաւ, պզտիկն
ալ փախաւ . . .

Երբ լեռը հասաւ, ընդհանուր հիացում
մը տիրեց : Հին եղևնիները երբեք տեսած
չէին այսքան սիրուն արարած մը, փոքրիկ
յաւերժահարսի մը պէս ընդունեցին զինքը :

Շագանակներէն կը փնջէր գետին կը խո-
նարհէին՝ դայն գգուելու համար իրենց ճիւ-
ղերուն ծայրովը : Ոսկեայ կենդանիները կը
բացուէին ճամբուն վրայ ու անուշ հոտ մը
կը բուրէին շուրջանակի : Ամբողջ լեռը սի-
րալիր ընդունելութիւն մը ըրաւ անոր :
Չկար այլ ևս ո՛չ ցիւց, ո՛չ փալախ և ոչ ու-
րիշ բան որ արգիլէր դայն ուստոստելէն,
քիմքին համեմատ ճարակելէն, հոն խոտ
կար, եղջիւրներէն բարձր խոտ և համեղ,
բարակ, ժանեկած և, հազարաւոր տունկերէ
բաղկացած, ցանկապատի մարգին շէր նմա-
նէր :

Ու ծաղիկներն հապա, որքա՛ն սիրուն
էին խոշոր կապոյտ կանթեղնիճներն ու եր-
կար բաժակներով ծիրանեգոյն մատնուկնե-
րը, որ զգլխիչ բոյր մը կ'արձակէին իրենց
ձոցէն :

Ճերմակ այծը, այս տեսարանէն կշտա-
ցած կ'իյնար անոնց մէջ ոտքերն օդին ու
կը գլտորէր գառիվարներուն երկայնութեա-
նը, խառն ի խուռն՝ թափուած տերեւնե-
րուն ու շագանակներուն հետ : Յետոյ, յան-
կարճ մէկ ուստումով կ'եղնէր, կը կանգնէր
տոտիկներուն վրայ : Հօ՛փ, ահա կը մեկնի,
գլուխը տնկած, աղուեսակապիկներուն և
մացառներուն մէջէն : Երբեմն լեռան վրայ
կ'եղնէր, երբեմն ճամբուն խորը կ'իջնէր,
վարը, վերը ամէն կողմ կը պտտէր : Կարծես
թէ Պ. Գէորգը լեռան մէջ տասն այծ ունէր :
Պատճառն այն է որ Սիրունիկ բանէ մը չէր

վախնար: Մէկ ոստումով կ'անցնէր մեծ հեղեղատներէն, որով վրան կը ցեխոտէր, ու կ'երթար չորցնելու ժայռի՝ մը վրայ՝ արեգական ներքե:

Անգամ մը սարահարթի մը եզերքէն երթալով հաւամբի ծաղիկ մը բռնած իր ականներուն մէջ, վարը, խիստ վարը, դաշտին մէջ, նշարեց Պր. Գէորգի տունը՝ ետեւի արօտավայրը:

Աչքէն արցունք գալու չափ խնդաց:

« Ո՛րքան փոքր է, ըսաւ, ի՞նչպէս կըրցայ բնակիլ հոն: »

Խեղճ անասուն, այդ վայրկեանին աշխարհի տէրը կարծեր էր ինքզինքը:

Վերջապէս Սիրունիկին համար՝ գեղեցիկ օր մը եղաւ այդ օրը: Կէս օրին, աջ ու ձախ վազվզելով, քարայծերու երամակի մը մէջ ինկաւ, որք ուժգին ուժգին կը կրծէին վայրի որթ մը: Մեր ճերմակ շրջագդեստով թափառաշրջիկը՝ խորին տպաւորութիւն մը յառաջ բերաւ հոն, որ արօտավայրին է՛ն լաւագոյն տեղը տուին անոր:

Յանկարծ հովը սաստկացաւ: Լեռը կորսնցնելով իր ցերեկի պայծառութիւնը՝ մանիշակի գոյն մը ստացաւ. իրիկո՛ւն եղած էր: « Կանուխ է տակաւին », ըսաւ այծը՝ զարմացած:

Վարը, դաշտերը՝ մառախուղի մէջ թաղուած էին: Պր. Գէորգի արօտավայրը մթութեան մէջ կ'անհետանար, և տնակն ալ միմիայն տանիքին քիչ մը ծուխով կ'երեւար:

Հօտի մը զանգակներուն ձայնը լսուեցաւ և հոգին շատ տխուր էր: Նոյն միջոցին բազէ մը անցաւ անկէ ու իր թեւերովն աւնոր քսուեցաւ: Այծը սարսուռաց: Քիչ յետոյ երկար ոռնում մը լսուեցաւ լեռան մէջ:

« Հո՛ւ, հո՛ւ... » կ'ընէր գայլը:

Սիրունիկ յիշեց գայլը ապունչ ամբողջ օրը խորհած չէր անոր վրայ: Միևնոյն վայրկեանին խիստ հեռուէն փող մը հնչեց հովտին մէջ. բարի Պր. Գէորգն էր որ վերջին ճիգ մը կ'ընէր զայն վերադաձնելու համար:

« Հո՛ւ, հո՛ւ... » կ'ընէր գայլը:

« Դարձի՛ր, դարձի՛ր... » կը պօռար փողը:

Սիրունիկ ուզեց դառնալ, բայց՝ արտինջ ցանկը, միևնախորհիւնը կը վախցնէին զինքը:

Քր. ուստի որոշեց մնալ:

Փողը չէր հնչէր այլևս:

Այծը իր ետին տերեւներու խշրտուք մը լսեց, դարձաւ, ու մթութեան մէջ տեսաւ երկու տնկուած ականջներ ու երկու աչքեր՝ որ կը փայլէին: Դայլն էր ան. Սոսկալի, անշարժ, ետեւի վրայ նստած հոն էր: Փոքրիկ այծը կը գիտէր և կանխաւ կը համոտէր: Դայլը որովհետեւ գիտէր թէ վերջապէս պիտի ուտէր զայն՝ չէր աճապարեր, միայն երբ Սիրունիկի դարձաւ՝ սկսաւ բարձրաձայն խնդալ. « Հա՛, հա՛, Պր. Գէորգի փոքրիկ այծը » և իր խոշոր կարմիր լեզուն շրթունքներուն քսեց:

Սիրունիկ՝ կորսուած կարծեց ինքզինքը, բայց յիշելով պահ մը ծերուկ Սեուկին պատմութիւնը, որ կուտած էր ամբողջ գիշերը, որոշեց պաշտպանել ինքզինքը: Չէ թէ յոյս ունէր գայլն սպաննելու, — այծերը չեն սպաններ գայլը, — այլ տեսնելու համար թէ պիտի կրնար ինքն ալ Սեուկին չափ երկարօրէն դիմադրել:

Կամաց կամաց գազանը մօտեցաւ, ու եղջիւրները պարել սկսան: Ա՛հ, քաջ այծուկը, որքա՛ն սրտանց կը կուտէր: Սուտ չըսեմ, տասն անգամէ աւելի գայլն ետ քաշուելու ստիպեց, որպէս զի քիչ մը շունչ առնէ: Այդ վայրկեանական դադարներու միջոցին, որկրամուր իր սիրած խոտէն ծիւմն ալ կը բրցունէր, ու յետոյ բերանը լեցուն կը դառնար կուտելու:

Ամբողջ գիշերն այսպէս անցաւ: Այծուկը՝ երբեմն երբեմն կը դիտէր լուսաւորներուն՝ պայծառ երկինքին մէջ փայլելը, և կ'ըսէր ինքնին. « Ա՛հ, հերիք է որ մինչև արշալոյս դիմադրեմ մէյ մը: »

Հետզհետէ գիշերը կը լուսնար, Սիրունիկ սաստկացուց եղջիւրի հարուածներն, գայլը՝ ակռայի հարուածներն: Աղօտ լոյս մը երեւցաւ հորիզոնին վրայ, և աքաղաղի մը կերկերուն ձայնը լսուեցաւ՝ մօտակայ ագաթակէ մը: Խեղճ անասունը, որ ա՛լ լոյսին կ'սպասէր մեռնելու համար, իր ճերմակ մուշտակը արիւնաթաթաւ գետին ինկաւ գայլին առջև, որ լսկոյն վրան նետուեցաւ ու լափեց զայն:

ԱՆՅՈՒՆ ՏՕՏԷ

Թարգմ. Վ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ

Ս. Սահակեան Վարժարանի ուսանող

ՓՈՊԵՐԵԿ ԳԵՏՆԱԿԱՆԸ

ՏՐԱՄԱՆՕՍՈՒԹԻՒՆ

(ԴՊՐՈՑԱԿԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ)

(Շաբ. 13րդ. քիւնն եւ վերջ)

Վարս. — Կենա՛նք, կենա՛նք, կէս ժամ ունինք տակաւին:

Սիրանոյց. — Ուրիշ ի՞նչ պիտի ընես աղուոր բան մըն ալ ըրէ:

Երանիկ. — Հիմա ալ ինքը հաւկիթ պիտի ըլլայ:

Սիրա. — Ձայնդ կտրէ Երանիկ, հիմա կը նեղանայ չընէր, աղէկ որ չիմացաւ:

Հերմիկ. — Հիմա դանք երկրորդ փորձին: Հանէ մատանիդ եւ տուր որ սա դերձանին կապեմ:

Սիրանոյց. — Տուր, դերձանը ես կապեմ:

Հերմիկ. — Ի՞նչ կայ որ, ինչո՞ւ չես տար:

Սիրա. — Բան չիկայ. բայց ես կը կապեմ, (մեկուսի) մատանիս ալ վրայ տալու ժամանակ չունիմ:

Հերմիկ. — Ա՛ւ, կապէ. կապելու մէջ վարպետութիւն չիկայ, եւ դերձանին ծայրէն բռնէ, հիմա ես դերձանը պիտի այրեմ եւ մատանին օդին մէջ կախուած պիտի մընայ. ուշադրութիւն ըրէք:

Անժել. — Աստուած իմ. բայց այս ի՞նչ պէս կ'ըլլայ կոր:

Երանիկ. — Ես ա՛լ կրնամ ընել, ես ա՛լ, շատ դժուար բան մը չէ. Վարսենի՛կ, ելիր սա աթոռին վրայ: Հիմա ես աթոռը պիտի քաշեմ եւ Վարսենիկը օդին մէջ պիտի մընայ. ահաւասիկ... բրա՛ֆ:

Վարս. — Ո՛ւֆ, ո՛ւֆ, ո՛ւֆ, ինչո՞ւ կ'ընես պէ, չգիտցած բանիդ մէջ ինչո՞ւ կ'իյնաս. ես ալ կարծեցի թէ իրաւ օդին մէջ պիտի կենամ:

Անժել. — Սաւոր գաղտնիքն ալ ըսէ տէ մենք պիտի երթանք:

Հերմիկ. — Այս շատ դիւրին բան մըն է: Դերձանը առաջուց երեք չորս անգամ աղ ջուրի մէջ թրջելէ եւ չորցնելէ վերջ կը գործածես. բնաւ մի՛ կասկածիր, շատ լաւ կը յաջողիս:

Սիրա. — Իրաւ որ շատ գիտուն ես եղեր, Օր. Հերմինէ, երանի թէ ես ալ փոխանակ փողոցները չափչիւրու, վարժարան երթայի ու աղուոր բաներ սորվէի. ամմա սա անպիտան Երանուհին տեսա՞ր. այսօր դպրոց չերթաս, չէ նէ օրթալս չեմ ըլլար, կ'ըսէ:

Երան. — Ե՞ս կ'ըսեմ քեզի թէ դպրոց մ'երթար. դուն ինծի բնաւ ըսած չես առնակ չէ՞. է՛յ շատ աղէկ, ըսենք թէ ես չար եմ, ինչո՞ւ իմին չպր խրատներուս կը հետեւիս, հիմա քեզի հօրը ինկիր ըսեմ նէ պիտի իյնամ:

Սիրանոյց. — Օ՛հ, քիչ մը դժուար, աչքս բաց հօրը կ'իյնամ:

Վարս. — Դպրոցէն փախչիլը արդէն արդէն աչքը բաց հօրը իյնալ ըսել է. է՛յ հիմա հակաճառութեան ժամանակ չէ, կարճ կապիցէք ալ որ Օր. Հերմինէն բան մ'ալ պատրաստէ մեզ զարմացնելու:

Հերմիկ. — Բա՛ւ լիցի. ես չեմ կրնար մարդ զարմացնել, այդպէս ըսելով ձեր ազնուութիւնը կ'ապացուցանէք. հիմա երրորդ փորձ մ'ալ պիտի ընեմ: Տեսէ՛ք սա ամանով ջուրը, հիմա ես այս ջրին մէջ քառորդ մէճիտ մը պիտի նետեմ եւ դուք մէջէն պիտի հանէք, առանց ձեռքերնիդ թրջելու:

Անժել. — Է՛յ շատ աղէկ, ատկէ դիւրին ի՞նչ կայ. ունելիին ծայրովը կը բռնենք եւ ձեռքերնիս չի թրջիր:

Հերմիկ. — Ո՛չ, ձեռքովիդ պիտի բռնէք եւ ձեռքերնիդ չպիտի թրջի,

Երանիկ. — Արդէն անանկ կ'ըլլայ, դիտեմ, գիտեմ. կը հաստատեմ. կը յիշե՞ս, Սիրանոյց, անցեալ օր մարդ մը շոգենաւէն նաւամատոյց ցատկած միջոցին ծովն ինկաւ եւ մուկի պէս ... չի թրջած ... դուրս հանեցին:

Վարս. — Է՛յ Երանիկ, կը չափազանցես կոր ալ. հարկաւ այդ ալ գաղտնիք մը ունի. քիչ մը համբերէ. — ըսէ, խնդրեմ Հերմինէ. ատոր գաղտնիքը ի՞նչ է:

Հերմիկ. — Քո՛յր իմ, սա Եւրոպացիները չիկա՞ն մի, շատ կարելի է որ օր մը իրենց գիտութիւնով առանց խեղդուելու ծովերու մէջ պիտի կարենան ապրիլ:

Վարս. — Է՛յ իշտէ այդ չեն կրնար ընել. նայէ՛, այդ խօսքիդ պոչով սուտ կ'ըսեն:

Հերմինե. — Դուք կ'երեւի թէ թովմաս առաքելին ցեղէն ես. տես եւ հաւատա, ահա՛ քառորդը առի, ձեռքս թրջած է:

Նրանիկ. — Ո՛վ Աստուած իմ, իրա՛ւ չոր է ձեռքը. բայց ի՞նչ նետեցիր ջուրին մէջ:

Հերմինե. — Լիքորոտ անուն փոշի մը կայ, որ ամեն դեղարան կը գտնուի, եթէ այդ փոշիէն քիչ մը ցանես՝ ձեռքդ բնաւ չի թրջիր:

Նրանիկ. — Դուք օքսալա՞ց ես, ի՞նչ ես. ե՞րբ սորվեցար այդ բաները:

Վարս. — Մեր ժամադրութեան ժամանակն եկաւ, Անժէ՛լ, ուստի մենք մեր շնորհակալիքը յայտնելով մեկնինք:

Անժէլ. — Ժամադրութեանս ճշդապահ

ասեղով մը տաս փարանոց մը ծակենք:

Նրան. — Կը ներես, Հերմինէ, խօսքդ ընդմիջելու, բայց կարծեմ սխալմամբ գամով ծակենք ըսելու տեղ՝ ասեղով ըսիր:

Հերմինե. — Ո՛չ, ո՛չ, չսխալեցայ, այո, ասեղովմը պիտի ծակենք, ա՛ռ, ահա մուրճը:

Սիրա. — Ի՞նչ կ'ըսես քոյր իմ, մուրճով մէյմը զարկածիդ պէս, ասեղը ցրելս ցրելս պիտի ըլլայ, մանաւանդ հիմակուան ասեղները, որոնք չէ թէ մուրճով զարնես, հապա կար կարած ատենդ կը կոտորին:

Հերմինե. — Ամէն խօսքդ հեգնական է, Սիրանոյշ:

Սիրանոյշ. — Քաւ լիցի, օրիորդ, ասիկա



ըլլալու համար ես ալ մեկնիլ կ'ուզեմ. ապա թէ ոչ բնաւ սրտէս չի դար կոր այս տեղէն բաժնուիլ:

Վարսեն. — Է՛հ, ի՞նչ կրնանք ընել, Օր. Հերմինէն մերն է, երբ որ ուզենք, մեզի կը զուարճացնէ ան, այնպէս չէ՞ Հերմինէ:

Հերմ. — Այո՛, այդպէս է, ճշդապահ եղեք ձեր ժամադրութեան:

Նեկուքն ալ (մեկնելով). — Ուրեմն մնաք բարով, ընկերներ, շնորհակալ եմք:

Հերմինե. — Չարժեք. երթաք բարով: զարծեալ հրամմեցէք: — Է՛հ, ընկերներ, հիմա որ մինակ մնացինք, ձեզի ուրիշ զարմանալի փորձ մըն ալ ընեմ ու վերջացնենք որովհետեւ մայրս այսօր զիս Բերա պիտի տանի գլխարկ մը առնելու համար: Հիմա,

ծաղրել չէ, այլ զարմանք մըն է ձեր տաղանդին վրայ. եթէ քիչ մը կոշտութեամբ կը խօսիմ, ասոր ալ պատճառը վարժարան չի յաճախելս է:

Նրան. — Փորձենք, Հերմինէ, փորձենք, դուք անոր ըսածին մի՛ նայիր:

Հերմինե. — Շատ լաւ, ասիկա դուրին բան մըն է, ա՛ռ սա ասեղը եւ՝ այս խիցին մէջէն անցուր. տասնոցը դիր սեղանին վրայ, ասեղին ծայրն ալ տասնոցին վրայ. հիմա ուժով մը զարկ, բայց ուշադրութիւն ըրէ որ ձեռքիդ չի գայ:

Սիրանոյշ. — Շա՛տ բան, խելքս չի...:

Հերմինե. — Ի՛նչ, խելքս չհասաւ պիտի ըսես, իմ խելքս ալ չպիտի հասներ այն ատեն երբ ասեղը կարենար առանձին ծա-

կել, բայց հիմա վրան խից կայ, չե՞ս տեսներ, այդ խիցն է որ ասեղը կանգուն կը պահէ, մանաւանդ որ ասեղը պողպատէ ըլլալուն ուրիշ սովորական մետաղներէն կարծր է:

Երանիկ. — Շատ շնորհակալ եմք, անուշիկս, շատ գոհ մնացինք:

— Սիրանոյշ. — Ամէն օր եթէ գանք, մեզի ասանկ բաներ կը սորվեցնեն:

Հերմիցն. — Ձեզի սորվեցնելը պարտականութիւն ըլլայ, ամենայն սիրով կը սորվեցնեմ. սակայն կը փափաքիմ որ դուք ալ վարժարան երթաք. հոն ամէն բան կատարեալապէս պիտի սորվինք. բաւական է որ կամք և յարատեւութիւն ունենաք. ապրին մեր ուսուցիչները որոնք երբէք չեն խնայեր մեզի, իրենց զիտցածը սորվեցնելու. ապրին անոնք, քանի որ կը փրկեն մարդկութիւնը տգիտութեան ճիրաններէն: Օրհնեալ ըլլայ վարժապետը:

Կ. Ս. ՏԵՄԵՐԱՆ

ՄԱՐԴԵՐ՝ ՈՐՈՆԲ ԶԵՆ ԱՅՐԻՐ

Բ.

Հիմա բացատրենք նախորդ թիւով արուած դարմանալի օրինակները:

Նախ ըսենք թէ՛ գործաւորներուն մորթին կարծրացումը կարեւոր կէտ մըն է. արդարեւ տեսնուած են դարբիններ, որոնք կարմրցած ձիու պայտը՝ ձեռքով կրակէն քաշելով գետին կը նետեն: Դուք իսկ տեսած էք խոհարարներ, որոնք գետին ինկած կրակի կտոր մը մատով վերցնելով կրակարանին մէջ կը նետեն: Ձեր բարեկամներէն եւ ծանօթներէն ոմանք ճրագը մարելու համար ցուցամատով ու բթամատով կը ձգվեն:

Բայց այսքանը չբաւեր անշուշտ բացատրելու համար ինքզինքնին անկիղելի հաւատացնել ուզող կարգ մը մարդերու փորձերը: Խտալացի բժիշկ մը, Սէմանթի, հաստատած է թէ տեսակ մը օծանելի կայ, որ եթէ մարմնոյն ո՛ր և է մասին վրայ քսուի, զայն կրակին կամ հրաշէկ մետաղի մը ազդեցութենէն զերծ կը պահէ:

Տասնըիններորդ դարուն սկիզբները, Սպանիացի մը կարգ մը փորձեր կատարեց իր մարմնոյն վրայ, նման Ռիչարտսոնի ըրածներուն: Գրեթէ միեւնոյն ժամանակները, Խտալացի մը, Լիօնէթթի, Նարոլիի մէջ անկիղելութեան հրաշքներ ըրաւ ժողովուրդին աչքին առջեւ: Այս վերջինը իր փորձերը սապէս կը կատարէր. նախ՝ հրաշէկ երկաթ մը կը պտտցնէր մազերուն վրայ առանց խանձելու, յետոյ բազուկներուն և սրունքներուն վրայ կը պտտցնէր, ոտքով կը դարներ ճերմկնալու աստիճան տաքցած երկաթի մը կտորի. կարմրցած երկաթ մը կը խածնէր ակունքերով. եռացած իւղ կը խմէր, մատը հալած կապարի



մէջ կը թաթխէր և լեզուին վրայ կը կաթեցնէր. դէմքը՝ կրակի վրայ թափուած ծծմբական կամ բորակական թթուի շոգիին կը բռնէր, եւն:

Սէմանթիին, Նարոլիի համալսարանին բնալուծութեան ուսուցիչը, միտքը դրաւ ասոր գաղտնիքը գտնել: Դիտած էր որ երբ Լէօնէթթի հրաշէկ երկաթը մարմնին մէկ տեղին կը զպչնէր, թանձր ճերմակ մուխ մը կ'ելլէր անկէ. նոյնպէս լեզուին վրայ հալած կապար թափած ժամանակը, նոյն գործարանը ճերմակ բանով մը ծեփուած էր:

Սէմանթիին ասկէ հետեւցուց թէ փորձը

կատարողը առաջուրն է օծանելի դեղ մը կը գործածէ։ Ինքն ալ սկսաւ այդ խնդիրին ետեւէն իյնալ։ Ձեռքը քանի մը անգամ ծածմբային թթուով չփելէ ետքը յաջողեցաւ տաք երկաթ մը բռնել։ Նոյնպէս տեսաւ որ պաղլեղի թանձր լուծումով ձեռքերը լուսւնէն և առանց սրբելու չորցնելէն ետքն ալ նոյն արդիւնքը յառաջ կուգայ։ Օր մը դիպուածով, առաջուրն է պաղլեղի մէջ թրջած ձեռքը աճառով ծեփելով տեսաւ որ կրակին խիստ անզգայ կը դառնայ։ Այս կերպով յաջողեցաւ հրաշէկ երկաթ մը դնել լեզուին վրայ։ Նոյնպէս փորձեց որ շաքարի փոշիի մէջ թաթխելէ ետքը՝ երբ ձեռքը աճառով կը ծեփէ՝ միեւնոյն արդիւնքը յառաջ կուգայ։

Աւելորդ է ըսել թէ Սէմանթիւնի իր փորձերով, շատ աւելի յառաջ գնաց այն խեղճուկ աճապարարէն, ուրկէ առաջին գաղափարը առած էր։

ԿՐԱԿ ՈՒՏՈՂՆԵՐԸ

Շատ աճապարարներ, առջի փորձերուն վրայ կ'աւելցնեն նաեւ վառած մարմիններ կլլելու տեսարանը։

Ռիչարտսըն հալած երկաթ, ծծումբ, մեղրամիմ կը կլլէր ամէնքն ալ բոցավառ, և կոկորդէն, կրակը ջուրի մէջ մարելու պէս ձայն մը կուգար ու բերնէն բոց դուրս կ'ելլէր։ Ասկէ գատ, ինչպէս վերը ըսինք, բերնին մէջ ածուխներ կը դնէր ու վրան միսի կտոր մը կ'եփէր։

Հիմա, կրակ ուտելը սովորական խաղ մը դարձած է փողոցի աճապարարներուն համար։

Դիտելի է որ լեզուն՝ տաքութենէ է՛ն քիչ ազդուող գործարանն է։ առանց զժուարութեան կ'ուտենք ապուր մը որու մէջ մատերնիս չդիմանար։ Միւս կողմէ վառած ածուխ մը, մարելով սեւնալուն պէս կը կորսնցնէ իր տաքութիւնը։ անանկ որ, կրնաք լեզունուդ վրայ պզտիկ վառ ածուխ մը դնել, կը բաւէ որ առաջուրն է քիչ մը թուքով թրջէք։ Տօտար տեսաւ որ Ռիչարտսընի բերանը դրած ածուխը լեզուին վրայէն մէկ մատ վեր կը կենար և, փքոցով փռող մարդը կրակը հրահրելէն աւելի բերանը կը զովացնէ։ Գալով ծծումբի ու մեղրամիմի խառնուրդին, Տօտար կ'ըսէ թէ կարող եղած է

մատի քանի մը երկվայրկեան մէջը բռնել առանց բան մը զգալու, և կ'աւելցնէ թէ բերանը դուրսած բոցավառ նիւթերը՝ բերանը գոցուելուն պէս կը մարին։

Կը պատմեն թէ ասանկ խաղերէ ախորժող նաւապետ մը, Հոգէնդոններու երկիրը ըրած մէկ խուզարկութեան միջոցին, սարսափած բնիկներուն աչքին առջեւ խմեց գաւաթ մը բռնկած օղի։ Քիչ մնաց որ խեղճերը իբր ֆէթիշներու աստուած մը պաշտէին զայն։

Կրակ, բոց, մուխ փչելը դժուար բան մը չէ։ Խծուծի պզտիկ գնդակ մը շինելով բռնկցուցէք և թողէք որ լաւ մը վառի, յետոյ բռնկած գնդակը պաղ խծուծի մէջ պատաստելով բերանուդ մէջ դրէք։ ու շաղրութիւն ընելու էք որ շուշը քիթերնուդ առնէք և բերաննուդ դուրս տաք։

ՅԵՂՈՂ ՀԵՂՈՒԿՆԵՐ

Մէկ քանի հեղուկներ, ինչպէս ալքոոլ, եթեր, ևլն. կը բռնկին առանց այրելու իրենց տակը գտնուած առարկաները։ տեսած էք որ գինեպանները իրենց ալքոոլին աղէկ վառիլը ցոյցնելու համար փայտէ սեղանին վրայ կը թափեն ու կը բռնկցընեն։ Նոյնպէս, առանց մլնաս մը կրելու կրնաք ափերնուդ մէջ քիչ մը եթեր լեցնել և լուցկիով մը վառել։ Ահա ասոր լացատրութիւնը։ Սոյն հեղուկները շուտով կը ցնդին, մանաւանդ քիչ մը բարձր բարեխառնութեան մէջ։ Երբ լուցկին կը մօտեցնէք ափերնուդ մէջ բռնած եթերին, անոր արձակած շոգին խփոյն կը բռնկի, իսկ հեղուկը շուտ շուտ կը շոգիանայ, անանկ որ վառողը չէ թէ հեղուկ եթերը, հապա անոր գոլորչին է։

ԶԱՐԷՀ Ն. ՊԵՐՊԵՐՆԱՆ



ԵՐԿՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՄԸ

Երկիրը շատ ծեր է, ու երկար ժամանակներէ ի վեր բերք կ'արտադրէ։ Իր ուժերը կ'սպառին։ Յորենի կամ առնոյտի արտի մը մէջէն անցած ատեննիդ՝ երբէք հարցուցած էք դուք ձեզի թէ խոտերը

ի՞նչ բանով կը սնանին. — Օդով, կը կարծէք միթէ: Այո՛, ճշմարիտ է. խոտերը, մանաւանդ բանջարեղէնները կ'ապրին օդով: Անոնց տերեւները կը ծծեն օդին մէջ եղող բորակածինը և զանի կը բաշխեն ամբողջ բոյսին, բայց ասիկա բոյսերու սնունդին մէկ փոքր մասն է միայն: Մնացեալը կ'առնեն նոյն իսկ հողէն: Անոնց արմատները կը մտնեն հողին մէջ, և մութ ուտեստաբան մը խուզարկող ձեռքերու նման տարածուելով՝ կ'երթան փնտռելու հողին մէջ աննդառութեան անհրաժեշտ չորս տարրերը որոնք են. բորակածին, լուսածնական թթու բոգաս և կիր:

Բորակածինը օգտակար է անոնց ինչպէս գինին մարդուն, Հրաշալի խթան մըն է ան որ բոյսին կուտայ գոյն եւ կ'աճեցնէ զանի ամէն կողմերէ, տարածելով տերեւները և երկնցներով ցողունը:

Լուսածնական թթուն, որ թթուածինէ և լուսածինէ բաղադրուած է, ոչ թէ բոյսին կուտայ գունաւորում և արտաքին փրթութում, այլ անոր ներքին կեանքը կ'ապահովէ: Լուսածնական թթուն է որ չրջան կ'ընէ բոլոր հիւսուածքներուն մէջ: Անիկա օգտակար է անոնց ինչպէս հացը մեզի:

Գալով բոգասին, անիկա բոյսին համար տեսակ մը միս է, նուազ պիտանի բայց խիստ օգտակար է: Վերջապէս, կիրը բուսական կամ կենդանական աշխարհի ատաղձն է: Մեր ոսկորները անկէ շինուած են: Ուստի շատ պէտք է ան՝ բոյսը կանգուն բռնելու համար:

Ուտեստաբան մը որ կը հասնի

Այդ հերկելի հողը կը պարունակէ սովորաբար այս չորս տարրերու բուսական պաշար մը: Բայց, որովհետեւ ամէն տարի փոքրիկ մաս մը կը թողու իր սնուցած իւրաքանչիւր բոյսին, բնականաբար կը հետեւի որ ան հետզհետէ կ'աղքատանայ: «Պօսի կամ Պրիի (Ֆրանսա) լաւ հող մը, կ'ըսէ Պ. Տէհէրէն, հող մը որ երկու հազար տարիներէ ի վեր ցորեն կ'արտադրէ, իւր արտադրած իւրաքանչիւր մէկ կենդինար ցորենին 900 կրամ լուսածնական թթու կ'արտածէ. այս լուսածնական թթուն է որ կազմած է Բարիդի մէջ իրարու յաջորդող սե-

րունդներուն ոսկրերը. այսօր այս ոսկրերը ստորերկրեայ գերեզմաններու երկայն գետնաղիները կը զարգարեն. և կը կարծուի թէ արտերու լուսածնատներու այս մշտական փոխադրութիւնը դէպի մեծ քաղաքներու գերեզմանները՝ յառաջ բերած է չքաւորութիւն մը որ ի յայտ կուգայ հունձքին նուազումովը»: Բնական զօրութիւններու գործն է անդադար նորոգել ամէն բան, բայց անոնք չեն նորոգեր հողի այս պաշարները, կամ՝ մանաւանդ չեն նորոգեր այնքան շուտով որ կ'արեւման տալ հողին ամէն աշուն, ինչ որ հունձքը գարնան ատեն առած է իբրեւ բորակածին, լուսածնական թթու, կիր և բոգաս: Երբ բոյսի ուտեստարաններէն մէկը թափուր է՝ միշտ թափուր կը մնայ: Երբ կ'ուզենք որ բոյսը նորէն աճի, մեզի կ'իյնայ այն ուտեստարանը լեցնել:

Դեղ մը որ ամէն բանի կը ծառայէ եւ բանի մըն ալ չի բաւեր

Ահա ասոր համար է որ հողին վրայ աղբ կը թափեն: Երկար ատեն այդ միջոցը միայն ծանօթ էր տունկերը սնուցանող հողերը սնուցանելու համար: Այս միջոցը ընտիր է, բայց սուղ է, այնչափ սուղ որ շատ չգործածուիր քաղելու համար անկէ այն օգուտները զոր կրնայ տալ: Յիշաւի շատ աղբ պէտք է հողին մատակարարելու համար քչիկ մը այն չորս էական տարրերէն՝ որուն վրայ խօսեցանք: Աղբը, նախ, կը պարունակէ շատ մը ջուր, յետոյ, շատ մը փայտային նեարդներ, ապա, այն նիւթերը զոր օղն ու ջուրը ի բնէ կը մատակարարեն հողին, վերջապէս, այն հանքերը որոնց մէջ լուսածնական թթուն, բոգասը, կիրը եւ բորակածինը քիչ համեմատութեամբ միայն կը գտնուին: Աղբը անթերի պարարտութիւն մըն է, որ քիչ թէ շատ ամէն տեսակ սնունդէն կը մատակարարէ հողին. բայց չի կրնար մինակ իրեն պէտք ունեցածը տալ անոր: Աղբ, եթէ կարելի ըլլար տեսնել թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ երբ բոլոր բոյսերը, իրենց միլիոնաւոր արմատներով, սեղանակցին այս ստորերկրեայ հացկերոյթին, պիտի տեսնուէր թէ մեր մշակած զանազան բոյսերէն իւրաքանչիւրը,

հող չէ թէ ան միեւնոյն ջրանոցէն ջուր խմող և միեւնոյն սեղանէն կերակրուող ըլլայ, հողին մէջ միեւնոյն պնակէն չեն ուտեր: Մէկը, ինչպէս ճակընդեղը, շատ կը սիրէ բորակածինը. ուրիշ մը, զոր օրինակ որթը, կը նախընտրէ բողբոսը, եւայլն: Այսպէս իւրաքանչիւրը իրեն աւելի պէտք եղած բանը առնելով հողէն՝ կը հետեւի թէ ամէնն ալ սնունդ կ'առնեն հողէն, բայց ոչ թէ միեւնոյն եղանակով: Արտի մը մէջ ուր կանճրակ կը մշակեն, կանճրակը պիտի քաշէ առնէ ամէնէն աւելի լուսածնական թթուն, հետեւաբար այս արտին ուտեստարանին մէջէն, նախ լուսածնական թթուի պաշարն է որ պիտի սպառի, մինչդեռ բորակածինի շտեմարանը անվթար պիտի մնայ: Ուրիշ տունկ մը, ընդհակառակը, չափեր լուսածնական թթուն, բայց անիկա ալ շատ մը բորակածին պիտի սպառէ և անոր դանդաղ արտին մէջ բորակածինն է որ պիտի պակսի: Այս երկու արտերն ալ պիտի աղքատանան, բայց ո՛չ թէ միեւնոյն համեմատութեամբ. եթէ ասոնց երկուքին ալ նոյն աղբը թափենք, պիտի հարստացնենք անշուշտ, բայց մէկուն իր պէտք ունեցածէն աւելի բորակածին պիտի տանք, որովհետեւ բնաւ վատնած չէ, մինչդեռ միւսին՝ իրեն պէտք եղածէն քիչ բորակածին պիտի տանք վասն զի միայն անոր պէտք ունի: Միթէ անկարելի՞ պիտի ըլլար այս երկու տարբեր վիճակներուն համար աւելի յարմար սնունդ մը պատրաստել: Այսօր ուր այնչափ աղւոր գիւտեր կ'ըլլան, միթէ կարելի չէ՞ դառնել ամէնուն համար երկար կեանքի էլիքսիրը, երկրին երիտասարդումը:

Թարգ.

ԳԱՌՆԻԿ Գ. ՄԵՍՐՈՊԵԱՆ



ՓՈՒՆԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԿԻՋԻՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Փ Ի Ն Ն

(Շար. 13րդ թիւէն)

ԳԼՈՒԹ Ե.

ՄԱՐԵՐԸ ԵՒ ՊԱՐՄԻԿՆԵՐԸ

Մագդեղականութիւն. — Ինչպէս յայտնի է պատմական. հին. թէ նոր. վաւերական աղ-

բերներէ ու խուզարկութիւններէ, Բակտրիան և Սոկտրիանիան եղած էին օրօրանայն ժողովրդոց, որոնք Արիք կամ Արիստատանցիք անունով անցան Ինդոսը, և Իրանեան անունով դուրս գետի Մարաստան կամ Մէդաստան ու Պարսկաստան: Մարաց ու Պարսից համար Զրադաշտն է իրենց օրէնքադիր, որ իրր թէ Քրիստոսէ 15 դար առաջ աշխարհք եկած ըլլայ, և որուն ուսուցած վարդապետութիւնները բովանդակուած են Զենդա-Վեստաի մէջ ճիշտ ինչպէս Հնդիկ պրահմաներու վարդապետութիւնները՝ Վէտաներուն մէջ, ինչպէս Յիսուսին ուսուցածները և քարոզածները՝ Աւետարանին ու Կտակարանին մէջ: Զօրաստրին կամ Զրադաշտին քարոզած վարդապետութիւնը որ կը կոչուի Մագդեղականութիւն կամ տիեզերական դիոտութիւն, բաղմաստուածամով հնութեան ամէնէն աւելի մաքուրն ու անուշն է: Ըստ այս մոգապաշտ վարդապետութեան, Զրուան Ախշրանեանը, այսինքն յաւիտենական անսահմանը կամ անսահման ժամանակը ստեղծեց Որմիզդը, ամէն բարեաց և արդարութեան հեղինակը, լոյսին ու կեանքին աղբիւրը, ինչպէս որ է իրեն խորհրդանշան արեւը, եւ Ահրիմանը՝ Ֆիզիքական ու բարոյական չարիքին սկիզբը: Որմիզդն ու Ահրիմանը (Արհմի) զատ զատ իրենց հրամանատարութեան տակ ունէին երկնային ու դժոխային ոգիներու այլեւայլ դասակարգի խումբեր, մեղի ծանօթ հրեշտակներու և սատանաներու զունդերուն նման, որոնք կ'աշխատին իրենց պետին կամ մեծաւորին իշխանութիւնը տարածել. բայց պիտի գայ օր մը՝ ուր Ահրիման վերջապէս յաղթուելով պիտի ճանչնայ իր պարտութիւնը և պիտի վերամբառնայ Որմիզդին քով, ինքն ալ վայելելու համար յաւիտենական կենաց երկնային երանութիւնները, իրմով դէպի չարը մոլորած բոլոր ժանտերուն հետ, և թէ մեղքը պիտի քաղուի ու անոր երեսէն իբր յաւիտենական պատիժ կրելիք տանջանքն ու տառապանքը պիտի վերնայ, այսինքն մեր հասկնալի լեզուովն ըսելու համար, Արհմի գործել տուած չարեաց երեսէն դժոխքին մէջ բանտարկեալ, տանջուող մեղաւոր հոգիները աստուածային ընդհանուր ներմանն արժանանալով ուր ուրեմն, իրենք ալ երկ-

նային արքայութեան մէջ երջանիկ ապրող արդարներուն հետ պիտի խառնուին և առնոց նման պիտի վայելեն յաւիտենական երանութիւնը :


Մազեղականութիւնը կամ Զրադաշտի կրօնքը իրեն հաւատացողներէն կը խնդրէ հաւատք, բայց միանգամայն կը պահանջէ ու կը պատուիրէ գործքը, աշխատանքը, ողորմութիւնը, հոգւոյն սրբութիւնը և մարմնոյն մաքրութիւնը : « Թէ որ ուտեն, կ'ըսէ Զէնդա-Վեստան նաեւ իրական կամ սուրբ գիրքը, ա'լ աւելի լաւ մտիկ պիտի ընեն աստուածային խօսքը : »

Հերկէ և սերմանէ, ով որ կը սերմանէ սրբութեամբ, կը կատարէ, կը գործագրէ օրէնքը : « Ի՞րբ Ժիսական պաշտամունք՝ ունէին հանապազօրեայ ու յաճախակի աղօթքներ, նման մեր շարականաց ու կրօնական ընթերցուածոց, կ'ընծայէին արգադիր նըւէր մը, որ կը բաղկանար կենդանւոյ մը մսէն, ինչ ինչ բոյսերու տունկերու հիւթերէն ու հոյզէն, և օրհնեալ կամ սրբազան կարկանդակներ, գրեթէ մեր հասկցած նըւ-խարքին ու մասին պէս կամ անոր սրբախորհուրդ նշանակութեամբ : Անոնց քուրմեր կամ մոգերը կը պահպանէին նուիրական կըրակը, ամբարձման անօթը : (մեր պատարագի ատեն առե'ք, կե'եք ըսելով պատարագւորին վեր վերցուած Հաղորդութեան Սկիզին նման) և նուիրական արարողութեանց վերաբերող ամէն անօթներն սպասներն ու կահ կարասին : Աղօթքը երբեմն խոստովանանք մըն էր առ աստուած, ո'չ առ մարդիկ : « Առաջի քեզ, Հայր, կը խոստովանիմ մեղքերս զոր գործեցի մտածմամբ, բանիւ և գործով : Գթա՛ մարմնոյս և հոգւոյս՝ այս աշխարհիս և միւսին մէջ : Կը հըրաժարիմ մեղքէն երեք խօսքերով և կը զղջամ (ապաշաւելով ու աշխարհելով) :

Մարեր կամ Մեղեր. — Պատմական ճշմարտութիւն համարելի ստոյգ բան մը չգիտենք Օքոս գետին եզերաց վրայ մնացած այս ցեղին ժողովրդոց մասին, բացի այն հատակտոր յիշատակութիւններէն զոր բրած են մեր և այլ ազգի հին պատմագիրք : Պարսիկ պատմիչներէն զատ՝ Յոյն պատմաագիրներու զրոյցներովն ծանօթ են աւելի և Պարսիկներուն՝ այսինքն Դարեհի, Քրեսէրքսի Հելլենաց գէմ մղած՝ Մարական

հաշակաւոր պատերազմներուն շնորհիւ է որ Ասիոյ ու Եւրոպայի միջեւ ցարդ միացած ու անխզելի կը մնայ ասոնց պատմաբանական կապը, վարրակէս՝ Մեղիաի կամ Մարաստանի կառավարիչը, Ասորեստանի թագաւորաց կողմանէ հոն հաստատուեցաւ :


(Շարունակելի)



Աղքատին համար չբացուող դուռը՝ պիտի բացուի բժիշկի համար :

* * *

Լաւ է առանց հարստութեան դիտութիւնը, քան թէ առանց դիտութեան հարստութիւնը :



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Վ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ



(Շարունակութիւն 13րդ թիւէն)

Եւ սոսկիմաք խառն զարմացումով մը ժայռին տրեւմտեան կողմին վրայ կը կարգայի, Բունական տառերով գրուած հազար անիծեալ անունը :

1ԱԽԻ ԿԻՄԱՆԿԻՄ

— Արն Մաքնիւնէ՛մ, գոչեց հօրեղբայրս, Հիմա ալ պիտի կասկածի՞ս :

Զպատասխանեցի՝ դուխա կախ լավայէ նստարանս վերադառցայ : Իրականութեան առջեւ համակերպելու էր : Զեմ գիտեր թէ որչափ ատեն այս փիճակիս մէջ մնացի, երբ գլուխս վեր առի, հօրեղբորս ու Հանսի հետ մինակ էի : Որսորդը, լավայի ճեղքուածքի մը մէջ անկողին մը յարդարելով, հանդարտ քուն մը կը քաշէր : Հօրեղբայրս՝ գառազե-

դի մը մէջ փակուած վայրի գազանի մը պէս խառնարանին յատակը կը դառնար ու կը դառնար: Ես ալ Հանսի օրինակին հետեւելով քնանալ փորձեցի:

Այսպէս անցաւ խառնարանին մէջ առաջին գիշերը: Յաջորդ օրը ամպոտ երկինք մը ծածկեց խառնարանին բերանը. առաջ բան մը չգագցի՝ երբ տեսայ որ հօրեղբորս բարկութիւնը գէշ տեսակէն սկսեց է: Պատճառը չուտով հասկցայ, և վերջին յոյս մը

Յունիսի 25ն էինք, երկինքը վեց եօթը օր ալ ծածկուած մնար, ճամբորդութիւնը յաջորդ տարուան ձգելու պիտի ստիպուէինք:

Չեմ կրնար նկարագրել հօրեղբորս բարկութիւնը: Ամբողջ օրը անցաւ առանց շուք մը կազմուելու: Հանս տեղէն չջարժեցաւ, դուցէ մտքէն կը հարցնէր թէ ինչո՞ւ հոգ կ'ապառնէինք: Հօրեղբայրս բերնէն խօսք մը չհանեց. աչքերը վեր յառած միշտ ամպամած երկինքը կը դիտէր ու կը դիտէր: 26ին



ծլաւ սրտիս մէջ: Ահա՛ թէ ինչո՞ւ:

Մեր ոտքերուն տակ բաց երեք ճամբաներէն մէկուն մէջ միայն Սաքնիւսէմ մտած էր, և ատիկա ալ օրոշելու համար իսլանտացի գիտունը ծածկագրին մէջ բռած էր թէ յունիսի վերջերը Աքարթարիսի շուքը անոր եզերքին վրայ պիտի իյնայ:

Եթէ արեւ չըլլար, շուք ալ չէր կազմուեր, որով որոշիչ նշան մը չէր գտնուէր:

կարկտախառն անձրեւ մը սկսաւ. Հանս՝ լավայի կտորներէ մեզի պատուպարան մը չինեց: Հօրեղբորս կատաղութիւնը չափէ դուրս էր. իրմէ աւելի համբերող մէկն անգամ չի պիտի դիմանար, որովհետեւ դործի մը վախճանին մօտ, ամէն բան կորսնցնել ըսել էր:

Բայց ամէն մեծ վիշտի Ատուած միութարանք մը կը զրկէ: Յաջորդ օրը երկինք նորէն ծածկուած էր, բայց 28ին, կիրակի

օրը, լուսնի փոփոխումի հետ օդն ալ փոխուեցաւ: Արեւու ճառագայթները խառնաբանին բերնէն ներս խուժեցին. է՛ն պզտիկ քարն իսկ յատակ լոյս մը կը թողուր: Աքար-թարիս ալ իր մասը ունեցաւ այս ցնծութեան մէջ. և իր շուքին դանդաղ շարժումին հետ կը պտտցնէր զառախօսն ալ. կէսօրին, եւր շուքը իր ամէնէն կարճ դիրքը կ'առնէ, եկաւ թեթեւ մը դպաւ կեդրոնի ծակին եղերքին:

— Հո՛ս է, գոչեց հօրեղբայրս, հո՛ս է. դէպի երկրիս կեդրոնը, աւելցուց դանիբէն, Հանսի նայեցայ:

— Յօրիւթ, ըսաւ առաջնորդը հանդարտ:

— Յառաջ, կրկնեց հօրեղբայրս:

Ժամը 7ը 13 վայրկեան կ'անցնէր,

ԺԲ.

Բուն ճամբորդութիւնը կ'սկսէր. մինչեւ հիմա դժուարութիւն քաշելէ աւելի յոգնութիւն կրած էինք. ասկէ ետքը դժուարութիւններ պիտի ծնէին ոտքերնուս տակ: Իեռ ակնարկ մը նետած չէի հորին մէջ ուր պիտի ընկուղէի. ժամանակը հասած էր ալ, հիմա իսկ կրնայի դասախօսին ընկերակցելու մերժել կամ հետը երթալ, բայց ամիցայ որսորդին առջեւ: Հանս ուղեւորութիւնը կ'ընդունէր անանկ անտարբերութեամբ մը, անանկ վտանգէ չվախնալու կերպով մը որ իրեն չափ քաջ չըլլալս ցուցնելու խօսնեցայ: Եթէ մինակ ըլլայի, գուցէ անհաստնում պատճառաբանութիւններու շարք մը նորէն սկսէի, բայց առաջնորդին ներկայութեանը լռեցի: Միտքս թաւ դէպի գեղանի վիրլանտուհիս եւ մէջտեղի բացուածքին մօտեցայ:

Ըսի արդէն թէ 300 ոտք շրջապատ ունէր. ցից քարի մը վրայ ելլելով վար նայեցայ. մագերս տնկուեցան. պարսպութեան զգացումը ամբողջ էութիւնս գրաւեց. տեղի մը գինովութիւն խելքս դարձնել ըսկաւ. կ'իյնայի կոր, ձեռք մը զիս բռնեց. Հանսն էր:

Թէեւ հազիւ ակնարկ մը նետած էի այս հորին մէջ, կրցայ սակայն գաղափար մը առնել անոր կազմութեան վրայ: Կողերը շատ ցից, բազում խորտ ու բորտ տեղեր ունէին, որոնք կրնային իբր սանդուղ ծառայել մեզի վար իջնելու համար. մինակ

բազրիքն էր որ կը պակսէր, և այդ պզտիկ պակաս մը չէր. կրնայինք հորին բերանը չուան մը կապել և ատիկա բռնելով վար սահիլ, բայց վարի ծայրը հասնելնուս ետքը ի՞նչպէս կրնայինք չուանը քակել: Հօրեղբայրս պարզ հնարքով մը այս դժուարութեան առաջը առաւ: Բթաջափ հաստ ու 400 ոտք երկար չուան մը քակելով մէջտեղէն՝ դուրս ցցուած լավայի կտորի մը անցուց և երկու ծայրերը հորին մէջ ձգեց: Այդ երկու ծայրերը միասին ձեռքերնուս մէջ բռնելով կրնայինք վար սահիլ մինչեւ որ լմննար, յետոյ մէկ ծայրէն ձգելով միւս ծայրէն կը քաշէինք և չուանը ինքնիրեն քակուելով մեզի կուգար: Այս կերպով կըրնայինք ուղաձնուս չափ վար իջնել:

— Հիմա, ըսաւ հօրեղբայրս. ասոր համար պէտք եղածը կարգի դնելով, հիմա ճամբու առարկաները կարգի դնենք. բոլոր անոնք որ դիւրաբեկ են, երեք ծրար պիտի ընենք ամէնքնիս ալ մէյմէկ հաստ տանելու համար: Հանս՝ գործիքներն և ուտելիքներուն մէկ մասը պիտի առնէ. դո՛ւն Աքսէլ՝ մաս մը ուտելիք և գէնքերը, ես ալ մնացած պաշարն ու բնագիտական գործիքը:

— Բայց հաղուսաները, հարցուցի, այս չուանները, սանդուղները, ո՞վ պիտի տանի ասոնք:

— Ինքնիրեննին պիտի իջնեն:

— Ի՛նչպէս կ'ըլլայ:

— Պիտի տեսնես:

Հօրեղբորս հրահանգին վրայ, Հանս բոլոր ոչ-դիւրաբեկ առարկաները իրար կապելով ահագին ծրար մը շինեց ու անդունդին մէջ գլորեց: Հօրեղբայրս ետեւէն կը նայէր, մինչեւ որ աչքէն կորանցուց. յետոյ գոհ երեւոյթով մը ոտք ելաւ:

— Հիմա, ըսաւ, կարող մերն է:

Կը հարցնեմ ձեզի. կարելի՞ է առանց սարսափու առանկ խօսք մը լսել:

Ամէնքնիս ալ ծրարնիս առինք ու ճամբայ ելանք Առաջ Հանս կը քաշէր, ետքը հօրեղբայրս, վերջէն ալ ես: Էջբը խոր լռութեան մէջ տեղի ունեցաւ՝ երբեմն երբեմն պարապին մէջ գլորող քարի մը արձագանքովը խռոված: Ինքզինքս ձգեր գըրեթէ կը սահէի մէկ ձեռքով զոյգ չուանը սեղմած, միւսովն ալ երկաթապատ գաւազանիս կառչած: Միակ գաղափար մը պա-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամսն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՅԷ		ԳԱՌԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼԻՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍՏՈՅ ՀԱՄԱՐ		ԼՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԵՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 ըուպի	ԹԻԼ 61		Տարեկանը	10 ծրանք

Ձեռքէ կը ծախուի հասար 40 փարսոյ

շարած էր զիս. կը վախնայի որ յենակէտս տեղի կուտայ. չուանը՝ երեք հոգի վերցընելու չափ ամուր չէր երեւէր աչքիս, կըրցածիս չափ քիչ կը կախուէի անկէ ու չի սահելու համար հաւասարակշռութեան հարաքներ կը գործէի:

Երբ լպրծուն աստիճաններէն մին Հանսի ոտքին տակ տեղէն կ'երերար, առաջնորդը հանդարտ ձայնով մը կ'ըսէր:

— Ժիֆ աքթ:

— Ուշադրութիւն, կը կրկնէր դասապետը:

Կէս ժամի չափ անցնելէ ետքը, հորին կողին վրայ բաւական դուրս ցցուած ժայռի մը վրայ հասանք: Հանս շուանին մէկ ծայրէն բռնելով քաշել սկսաւ. միւսը՝ վերի ժայռին վրայէն անցնելով ոլոր ոլոր վար ինկաւ, քարի ու լավայի պզտիկ կտորներու կարկուտ մը տեղացնելով գլխնուս վրայ:

Վրան կեցած նեղուկ սարահարթին եղերքէն վար նայեցայ. հորին յատակը դեռ չէր տեսնուէր: Չուանին խաղը նորէն սկըսաւ, եւ կէս ժամ ետքը, երկու հարիւր ոտք աւելի վար իջանք:

Չեմ գիտեր թէ գիտութեան այնքան խենդ երկրաբան մը կա՞յ որ այս էջքի միջոցին չըջակայ ժայռերուն բնութիւնը քրննելու ելլէ. ես՝ ատանկ բանով մը չէի զբաղեր, այդ հողերը ի՞նչ կ'ուզէին թող ըլլային: Բայց կարծեմ հօրեղբայրս բաւական դիտողութիւններ ըրած ու ծանօթագրած էր, ինչու որ, կանգ առած մէկ միջոցնուս ըսաւ.

— Քանի կ'երթամ, այնքան վստահութիւնս կ'աւելնայ. այս հրաբխային հողերուն դիրքը Տավրի տեսութիւնը կը հաստատէ. նախնական հողի մը ներկայութեան մէջ կը գտնուինք, հող մը, ուր տեղի ունեցած է շուրի եւ օդի հպումով բռնկող մետաղներ:

րու հակազդեցութիւններն. բացարձակապէս կը մերժեմ կեղբոնական հուրի տեսութիւնը. քիչ ատենէն պիտի տեսնենք:

Միշտ նոյն հետեւութիւնը կը հանէր. կը հասկնաք որ պատասխանելու վիճակի մէջ չէի, ուստի ձայն չէի հաներ. լռութիւնս իբր հաւանութիւն կը նկատուէր ու ծամբանիս կը շարունակէինք:

Երեք ժամ ետքը դեռ յատակը չէր տեսնուէր, երբ գլուխս վեր կը դարձնէի, կը տեսնէի որ հորին բերանը երթալով կը պզտիկնար. կողերը, իրենց թեթեւ հակուածին պատճառաւ, քիչ քիչ իրար կը մօտենային: Ա՛լ չորսդին մթնել կ'սկսէր: Սակայն միշտ կ'իջնէինք. վար գլորած քարերու արձագանքէն կրնայի գուշակել թէ յատակին մօտեցած ենք:

Մինչեւ հիմա տասնըչորս անգամ շուանը քակած նորէն անշուքած էինք, եւ ամէն անգամուն կ'իս ժամ միջոց անցեր էր. ըսել է եօթը ժամ եւ 1 1/2 հատ մէկ քառորդ ժամ դադարի համար. ընդ ամէնը տասնուկէս ժամ: Ըսել է հիմայ ժամը հինգն էր: Գալով իջած խորութեան, 2800 ոտքի չափ ըլլալու էր: Այս միջոցին Հանսի ձայնը առի.

— Դադար, ըսաւ:

Կանգ առի, երբ հօրեղբորս գլուխին պիտի գարնէի ոտքերու:

— Հասանք, ըսաւ:

— Ո՞ւր, հարցուցի:

— Ուղղահայեաց հնոցին յատակը:

— Ուրիշ ճամբայ չ'կա՞յ:

— Այո՛, նեղ գեանուղի մը կը նշմարեմ դէպի աջը: Ի՞նչ եւ է. վաղը կը նայինք. հիմա ճաշենք ու պառկինք:

Թարգմ.

ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԽՄԱԴՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1884

1885

1886



1887

1888

1889

THE SECRETARY OF THE
NAVY
WASHINGTON
D. C.

NAVY DEPARTMENT
WASHINGTON


NAVY DEPARTMENT
WASHINGTON
D. C.

NAVY DEPARTMENT
WASHINGTON
D. C.

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա Ժ Ս ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶՍ.ՊԹԻԷ ԶՍ.ՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՑԱՔԱՐԴԵՐՈՒ
ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ


Մէկ լեզուէ միջակ թուղթ	100 հատը	7 ղշ.
Երկու » » » » » »	» » » » » »	9 »
Երեք » » » » » »	» » » » » »	11 »
Մէկ ընտիր » » » » » »	» » » » » »	8 »
Երկու » » » » » »	» » » » » »	10 »
Երեք » » » » » »	» » » » » »	12 »
Ոսկեգօծ եղերքներով ընտիր թուղթ	» » » » » »	16 »
» » » » » » » » » » » »	» » » » » » » » » » » »	17 »
» թրթրլը եղերք. ճերմակ » » » » » »	» » » » » » » » » » » »	17 »
» » » » » » » » » » » »	» » » » » » » » » » » »	18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Բըզգա գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝ 12 ղշ. աւելի ծախք մը վճարել պէտք է:

Լուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը 60 ղշ:

Գաւառներէ եղած յանձնարարութեանց մար թղթատարի ծախք չի պահանջուիր: հաւճարմունք կանխիկ են:

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » » » » »	4
Մաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերաղարդ քերական	2
Կ. Տէմիրեան էֆ. Ի Իրագիտութեան Ամբողջական դասընթացքը	
Մաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Քրիստոնէական (Ս. Խանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղօթագիրք	10



Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատը 40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ: